Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԿԳՄԿ գիտական խորհրդի

<<13>> հունվարի 2018թ. թիվ 128 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Երևան 2018

1.Ընդհանուր դրույթներ

1.1 ԳԿՄԿ-ում մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման կարգը բխում է ԳԿՄԿ կանոնակարգերի և այլ իրավական ակտերի դրույթներից:

1.2 Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատումը ԳԿՄԿ որակի ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչներից է:

1.3 Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման կարգում փոփոխություններ և լրացումներ են կատարվում լրացուցիչ ծառայություն մատուցող պատասխանատու անձանց կողմից:

1.4 Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման կարգը վերանայվում և հաստատվում է գիտական խորհուրդում:

2. Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման անցկացումը

2.1 Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատումը իրականացվում է հարցման միջոցով:

2.2 Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատումը իրականացվում է յուրաքանչյուր դասընթացի /լրացուցիչ ծառայություն/ ավարտին՝ ըստ անհրաժեշտության:

2.3 Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատումը իրականացվում է ԳԿՄԿ որակի ապահովման բաժնի կողմից:

2.4 Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատումը իրականացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (Հավելված 1):

2.5 ՈՒսումնառողը գնահատում է մատուցվող լրացուցիչ ծառայությունը՝ անհրաժեշտության դեպքում ավելացնելով իր կողմից լրացուցիչ մեկնաբանություն:

2.6 Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատումն անանուն է:

3. Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների հարցում-գնահատման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1 Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատումը և արդյունքների մշակումը իրականացվում է ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժնի համապատասխան մասնագետի կողմից:

3.2 Խոտան համարվող հարցաթերթերը (թերի լրացված, բաց թողնված հարցեր) և հարցաթերթում կատարված ուղղումները չեն հաշվարկվում:

3.3 Մշակված քանակական և որակական վերլուծությունները տրամադրվում են համապատասխան ծառայությունների մատուցման կենտրոններին՝ հետագա կիրառման համար:

3.4 Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման արդյունքները պահպանվում են Կրթության որակի ապահովման բաժնում:

4. Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման արդյունքերի օգտագործումը:

4.1 Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման արդյունքերը քննարկվում են համապատասխան ամբիոններում, ստորաբաժանումներում, որոնք իրականացնում են լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններ:

4.2 Ծառայությունների մատուցման համապատասխան օղակներում՝ համաձայն գնահատականների և արդյունքերի, իրականացվում է որակի բարելավմանն ուղղված միջոցառումների մշակում և քայլերի հաջորդականության սահմանում:

Հավելված 1

Լրացուցիչ ծառայությունների գնահատման հարցաշար

Հարգելի ուսումնառող,
այս հարցաթերթիկով մենք ցանկանում ենք ուսումնասիրել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում մատուցվող լրացուցիչ ծառայություններից ուսումնառողների գոհունակության աստիճանը: Ձեր կարծիքը շատ կարևոր է մեզ համար, այն կօգնի բարելավել մեր ծառայության որակը և կմեծացնի աշխատանքի արդյունավետությունը: Շնորհակալ կլինենք Ձեր անկեղծ պատասխանների համար:

Դասընթացի անվանումը_____

Խնդրում ենք նշել, թե ինչպիսի՞ աղբյուններից եք տեղեկացել ԳԿՄԿ-ում անցկացվող վերոնշյալ դասընթացի մասին:

1. Ընկերներից
2. Կենտրոնի ուսանողներից կամ աշխատակիցներից
3. Սոցիալական ցանցերից /Facebook, Twitter, և այլն/
4. ԳԿՄԿ կայք
5. Այլ_____

Խնդրում ենք գնահատել պնդումները **1-5** միավորային սանդղակով, որտեղ **5-ը ամենաբարձր** ցուցանիշն է, **1-ը՝ ամենացածրը**:

N		1-5
1.	ԳԿՄԿ ղեկավար կազմի հաղորդակցումն ուսումնառողների հետ /գրանցում, վճարման համակարգ և այլն/:	
2.	Ուսումնառողների իրազեկումը ԳԿՄԿ-ի նորարարական ծրագրերի վերաբերյալ:	
3.	Ուսումնական-մեթոդական գրականության ապահովումը:	
4.	Ուսումնական ծանրաբեռնվածության մակարդակը:	
5.	Դասախոս-ուսումնառող փոխհարաբերությունները:	
6.	Ուսուցման մեթոդները և տեխնիկաները :	
7.	Ուսուցման և խորհրդատվության /կոնսուլտացիա/ հասանելիությունը:	
8.	Ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը այս դասընթացում:	
9.	Լսարանային պայմանները՝ տեխնիկական հագեցվածությունը, համակարգիչներով ապահովված լինելը:	
10.	Դասընթացի հասանելիությունը և մատչելիությունը:	
11.	Կցանկանայի՞ք մասնակցել նմանատիպ այլ դասընթացների:	Այո _____ Ոչ

Լրացուցիչ մեկնաբանություններ_____

_____